# ԷՍՏՈՆԱՑԻ ՀԵՌՈՒՍՏԱԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԳՈՐԻՍԻՑ

*Մայիսի 12-ին էստոնական հեռուստատեսության լրագրող Անդրես Ռայդը եւ օպերատոր Պեթեր Լաանսալուն վերադարձան Գորիսից: Մեր աշխատակից ԳԱՅԱՆԵ ԱՖՐԻԿՅԱՆԸ զրուցեց նրանց հետ:*

- Մայիսի 10-ին երեկոյան հասանք Գորիս: Այնտեղից միլիցիայի մայորը մեզ ուղեկցեց Տեղ գյուղը: Բնակիչների մեծ մասն արդեն հեռացել էր գյուղից: Մնացածները ցույց տվեցին, թե ինչպես, նույնիսկ, խոզերի վրա էին կրակել: Գյուղի դաշտում տեսանք այրված տրակտոր: Հաջորդ օրը, առավոտյան, մեկնեցինք հեռուստաաշտարակ: Ահավոր տեսարան էր: Միայն փամփուշտի պարկուճները, որ մենք հավաքեցինք, կլիներ մի արկղից շատ: Այնտեղ գնդակոծում էր եղել: Հարձակման պահին մի միլիցիոներ պատուհանից դուրս էր նայել, իսկ նրան անմիջապես գնդակահարել էին: Ոմբակոծված էին նույնիսկ հեռուստասարքավորումները: Դա ու՞մ էր հարկավոր: Ներքեւում սենյակ կար: Երեւում էր, որ առավոտյան նրանք նախաճաշելիս են եղել, սեղանը դեռ ծածկած էր: Մարդիկ կրակոցներ լսելով, արագ դուրս են եկել այդտեղից եւ մինչեւ օրս չեն գտնվել: Անհասկանալի է, ինչի՞ էր պետք այդքան կրակել: Ինչպիսի՞ ռազմական խմբավորումներ կարող էին այնտեղ լինել: Դա կեղծիք է: Հեռուստաաշտարակից մեկնեցինք Շուռնուխ: Այնտեղ նույնպես քիչ մարդ էր մնացել, որովհետեւ տղաներին պատանդ էին տարել: Գյուղում մնացել էին միայն ծերերը, կանայք: Մարդիկ քնած են եղել: Նրանք գնդակոծել են տները, մեքենաները, որպեսզի հնարավորություն չլինի այնտեղից փախչելու: Մի ծեր կին մեզ ցույց տվեց սառնարանը, որը գնել էր հինգ ամսվա թոշակի փողով. այն ամբողջությամբ գնդակոծված էր:

Մտանք գյուղի դպրոց: Շենքի ներսում շուրջբոլորը պարկուճներ էին: Գնդակոծել էին դասասենյակի դռները, նույնիսկ երեխաների համար ճաշ պատրաստելու կաթսան: Դպրոցը բոլորովին վերջերս էր վերանորոգվել: Իսկ պատերն ամբողջ գնդակոծված էին: Բարեբախտաբար այդ ժամին այնտեղ երեխաներ չեն եղել:

Գյուղում տասը երեխամայր մի կին կար: Տարել էին նույնիսկ նրա թոռներին: Իսկ նա հայրենական պատերազմի շքանշաններ ուներ: Ոմբակոծել էին անխնա ամեն ինչ, նույնիսկ առանց ակիվների մեքենան: Գյուղում մեզ պատմեցին, թե ինչպես ծերերին եւ երիտասարդներին բազմիցս հրաման տալով «պառկե՛լ, վե՛ր կենալ», ծաղրուծանակի են ենթարկել:

*Հ.- Երբ այս ամենից հետո շփվում էիք գյուղի մարդկանց հետ, ի՞նչ տպավորություն նրանք ձեզ վրա թողեցին:*

Պ.- Այս ամենից հետո, բնական է, նրանք ինչ-որ չափով նույնիսկ կորցրել էին ինքնատիրապետումը: Իհարկե, ֆաշիստներն այդպես չէին անի: Գյուղացիները պատմում էին, որ կինվորների դեմքերը ներկված են եղել «կելյոնկա»-ով: Սակայն այս ամենից հետո, մարդկանց մոտ, հատկապես կանանց, զգալի էր ինքնավստահությունն ու կամքի մեծ ուժը:

*Հ.- Անդրես, ձեր Տալլինն վերադառնալուց հետո, Էստոնիայում կիմանան այդ մասին: Չե՞ս կարծում, որ բավականին ուշ է արդեն:*

Պ.- Այդ առումով, իհարկե ուշ է, սակայն մինչ այդ պարզապես հնարավորություն չկար գալու: Չնայած այն բանին, որ մենք չենք ունեցել տեսագրություն, ես ամեն օր զանգահարել եմ ՀՀՇ-ի լրատվական կենտրոն, եւ ստացված լուրերը անմիջապես հաղորդել եթեր: Հիմա, հատկապես երբ Միությունը տապալվում է, բոլորի ուշադրությունը Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի եւ երեք մերձբալթյան հանրապետությունների վրա է բեւեռված: Չնայած, ասեմ, որ որոշ առումով, մեր բախտը պարզապես բերել է:

*Հ.- Հայաստանի մասին լուրերը ինչպե՞ս են տարածվում Էստոնիայում:*

Պ.- Կարծում եմ, հնարավորին չափ լայն: Այդ առումով մենք սահմանափակումներ չունենք: Իսկ ՏԱՍՍ-ի հաղորդագրությունները երբեմն տալիս ենք, զուգահեռաբար տալով նաեւ Հայաստանից ստացված լուրերը:

*Հ.- Իսկ ինչպե՞ս եք վարվում, երբ զուգահեռաբար լուրեր եք ստանում նաեւ Բաքվից:*

Պ.- Նույնիսկ մայիսի 12-ի մամլո ասուլիսի ժամանակ Վազգեն Մանուկյանը ադրբեջանցիների դեմ ոչ մի բան չասաց: Ի դեպ, դա ես զգացել եմ նաեւ Բաքվում: Երկու շաբաթ առաջ ես առիթ ունեցա արեւմտյան բիզնեսմենների հետ այնտեղ մեկնել: Պրեմիեր մինիստրի հետ հանդիպման ժամանակ նաեւ առիթ գտա այդ մասին հարցնելու: Իհարկե, ինչպես միշտ, նրանք պնդում են, թե Արցախը ադրբեջանական եղող է, բայց նա նույնպես հայերի դեմ ոչ մի բան չասաց: Սակայն Կենտրոնի հետ կապված հարցերի մասին խոսելիս Հասանովը, արտաքին ինքնավստահությունից զատ, ինչոր ներքին հրճվանք էր ցուցաբերում: Դեռ այն ժամանակ դա ինձ տարօրինակ թվաց:

Ինչեւէ, բոլորիս պարզ է, որ «կենտրոնին» շահավետ է այս կոնֆլիկտը, որովհետեւ այդ բողի տակ նա ինչ ուզում, անում է:

Նույնիսկ հայկական գյուղերում մարդիկ արդեն ասում էին, որ դա ադրբեջանցիները չեն, այլ՝ բանակը: □